

ՇԵՔՍՊԻՐԻ « ՀԱՄԼԵՏ»-Ը ՀԱՅԵՐԵՆ
(Պատմական համառոտ ակնարկ և թարգմանական խնդիրներ)

ԱՐԱՄ ԹՈՓՅԱՆ

Տեղեկություն կա, որ XVII դարի վերջում հրատարակված մի հայերեն գրքում արդեն խոսք է եղել Շեքսպիրի պիեսների մասին, սակայն նրա անվան առաջին փաստացի հիշատակումները հայ գրականության մեջ գտնուում ենք 1821–1823 թթ. Հնդկաստանի Կալկաթա քաղաքում լույս տեսած «Շտեմարան» շաբաթաթերթում: Այնտեղ մեկ անգամ հանդիպում է նաև Համլետի անունը¹:

Երկն առաջին անգամ հայերեն է թարգմանել Արամ Տետեյանը² (Դեդեյան): 1866 թ. Զմյուռնիայում առանձին գրքով տպված «Հռոմեոս և Ճյուլետտ»-ի իր՝ բնագրից թարգմանության առաջաբանում նա գրում է, թե թարգմանել է Շեքսպիրի նաև այլ գործեր, որոնց թվում՝ «Համլետ»-ը: Այն 1862 թ. ոչ լրիվ լույս է տեսել Զմյուռնիայում հրատարակված «Դիմակ» հանդեսում, որի միայն հազվագյուտ օրինակներ կան գրադարաններում: Գտնվել է այդ թվականի մեկ համար, ուր ընդգրկված է Տետեյանի թարգմանության հատված (I. 2-ից): Ահա՛ արձակ արևմտահայերեն այդ թարգմանությունից մի նմուշ (Կլավդիուսի գահաճառի սկիզբը). «Թեպետ և Համլեթի՝ մեր սիրելի եղբոր մահվան հիշատակը չի մոռացվեցավ, որուն համար սրտերնիս ցավով լցված, և մեր բոլոր տերության դեմքը միակերպ տրտմություն մը պատած է, այնուամենայնիվ շրջահայեցողությունը բնության հետ այնքան պինդ կովեցավ, որ մենք խոհեմագույն կսկիծով, իր վրա խորհած ասեննիս, մեր վրայոք ալ հիշատակություն ընելով կմտածեմք»:

1889 թ. հրատարակվել է «Համլետ»-ի մի արևելահայերեն արձակ թարգմանություն³: Իր առաջաբանում թարգմանիչ Սենեքերիմ Արծրունին տեղեկացնում է, որ գործն սկսել է 1880 թ. օգոստոսին և ավարտել 23 օրում (Հայկական թատրոնի վարչությունը՝ Արծրունու պատվիրատուն

¹ Վ. Թերզիբաշյան. Շեքսպիրը հայերեն, Երևան, 1956, էջ 16–19: Ուշագրավ է, որ Շեքսպիրի հետ հայերի առնչություններին 1958 թ. հատուկ անդրադարձել է Shakespeare Quarterly պարբերականը. տե՛ս E. D. Alexander. Shakespeare's Plays in Armenia.– 9.3 (1958), pp. 387–394.

² «Համլետ»-ի առաջին, մինչևասեփյանական թարգմանությունների վերաբերյալ տեղեկությունների մեր հիմնական աղբյուրն է՝ Վ. Թերզիբաշյան. նշվ. աշխ., էջ 43–47, 67–77: Նույն գրքից ենք արել Տետեյանի ու Եզեկյանի թարգմանություններից մեջբերումները:

³ Հմմտ. Ն. Մուրադյան. Մասեփյանի տաղաչափական գյուտը.– Շեքսպիրական. հայկական շեքսպիրյան տարեգիրք, խմբագրությամբ Ռ. Զարյանի, հ. 2, Երևան, 1967, էջ 163–164:

նրան պարտավորեցրել էր աշխատանքն անել մեկ ամսում⁴): Նպատակը պիեսի բեմականացումն էր: Քանի որ Արծրունին անգլերենին չէր տիրապետում, նա օգտվել է ռուսերեն ու ֆրանսերեն մի շարք թարգմանություններից՝ դրա հետևանքով թույլ տալով բազմաթիվ իմաստային անճշտություններ: Օրինակ՝ «Երանի թե խիստ, խի ստ կարծր այս մարմինը» (I. 2. 129)⁵ դարձել է «Ո հ, եթե դուք, իմ հոգույս շղթաներ», որովհետև հայ թարգմանչի օգտագործած մի ռուսերեն տարբերակում գրված է. «О если б вы, души моей оковы»: Արծրունու թարգմանությունը մամուլում դաժան քննադատության է ենթարկվել՝ նույնիսկ որակվելով իբրև «քրեական հանցանք»: Սակայն հայ թատրոնի համար այն կարևոր նշանակություն է ունեցել: Այս թարգմանությամբ է Համլետի դերը խաղացել Պետրոս Ադամյանը (ինչպես ենթադրվում է՝ իր հատվածները նախապես խմբագրելով⁶):

1884 թ. «Համլետ»-ի մի ուրիշ արևելահայերեն թարգմանություն է ավարտել ուսուցիչ ու լրագրող Ավետիք Եզեկյանը: Այն ամբողջությամբ չի տպագրվել. հատվածներ են լույս տեսել նախ 1889 թ. «Մուրճ» և ապա 1916 թ. «Տարագ» պարբերականներում: Չնայած որ թարգմանությունն արված էր բնագրից, արձակ լինելու պատճառով այն լայն ճանաչում չի գտել: Ահավասիկ մի հատված Համլետի երրորդ մենախոսությունից. «Լինել թե չլինել – ահա այդ է խնդիրը: Ո՞րն է ավելի հոգու ազնվություն – տանել լլկող բախտի նետերին ու քարերին, թե զինվել ծովահեղեղ վշտերի դեմ և, ընդդիմանալով, վերջ տալ նոցա: Մեռանիլ ... քնանալ և ոչ ավել... և ասել, թե քնանալով վերջ ենք տալիս սրտի ցավերին և բնական հազար ու մի տանջանքներին, որոնցով օժտված է մեր մարմինը. դա մի վախճան է, որին կարոտով պետք է փափագել: Մեռանիլ... քնանալ, գուցե և երազել: Այո, այդտեղ է տարակուսանքը: Որովհետև մահու այդ քնի մեջ ի՞նչ երազներ կարող են գալ ...»:

Թերզիբաշյանը որպես «Համլետ»-ի թարգմանիչների հիշատակում է նաև Մխիթարյան միաբան Արիստակես Կասկանդիյանին (Քասքանդիյան), ով որոշ հատվածների գրաբար թարգմանություն է արել, Գաբրիել Պատկանյանին, ում՝ Մատենադարանում պահվող թղթերում մի կիսատ թարգմանություն է գտնվել, և Գարեգին Բարազյանին (Փափագյան)⁷: Վերջինիս՝ անգլերենից արևմտահայերեն արձակ թարգմանությունը տպագրվել է Վիեննայում 1899 թ.⁸: Նաև տեղեկություն կա, որ 1882 թ.

⁴ Համլետ, հեղինակություն Վիլլիամ Շեքսպիրի, թարգմանություն Սենեքերիմ Արծրունու, Թիֆլիս, 1889, էջ V:

⁵ «Համլետ»-ից հայերեն մեջբերումները, եթե այլ հղում չկա, և տողահամարներն ըստ մեր թարգմանության են. Ուիլյամ Շեքսպիր. Համլետ, անգլերենից թարգմանությունը, ուսումնասիրությունը և մեկնությունները Արամ Թովչյանի, Երևան, 2013:

⁶ Հայտնի է այդ մասին Հովհ. Թումանյանի վկայությունը. «Հանգուցյալ Ադամյանի դերի մեջ այսպես է եղել. «Այո՛, լինել ազնիվ մարդ՝ նշանակում է լինել ընտրյալ տասն հազարներից»: Բայց ջնջել է և իր ձեռքով գրել այսպես. «Այո՛, աշխարհիս այս ընթացքի մեջ հազիվ կարելի է տասն հազար մարդոց մեջ մի ազնիվ մարդ գտնել» (Թումանյանը քննադատ, կազմեց և խմբագրեց՝ Նվ. Թումանյան, առաջաբան՝ Էդ. Թովչյան, Երևան, 1939, էջ 82):

⁷ Վ. Թերզիբաշյան. նշվ. աշխ., էջ 54, 101, 108:

⁸ Տե՛ս Շեքսպիր. Համլետ, թարգմանեց Գարեգին Յ. Բարազյան, Վիեննա, 1899: Նախաբանում (ԻԳ) նա գրում է. «Սույն թարգմանությունը մի քանի տարիներ առաջ

«Համլետ»-ն սկսել է թարգմանել նշանավոր քանասեր Ստեփան Մալխասյանը (հրատարակված են նրա թարգմանած «Լիր թագավոր»-ը [1888 թ.] և «Մակբեթ»-ը [1892 թ.]): Նա այդ մասին գրել է մի նամակում⁹, բայց թարգմանությունը (կամ թարգմանության փորձը), որքան մեզ հայտնի է, չի տպագրվել:

«Համլետ»-ի ամենաանվանի հայ թարգմանիչն է դիվանագետ, գրական ու հասարակական գործիչ Հովհաննես (Խան) Մասեհյանը: 1894 թ. «Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերությունը» տպագրել է նրա՝ անգլերենից հայերեն թարգմանության առաջին տարբերակը: Մասեհյանը, հարազատորեն հետևելով բնագրին, պիեսի արձակ հատվածները թարգմանել է արձակ, իսկ չափածոն՝ չափածո: Աշխատանքն ընդունվել է գոհունակությամբ, և այդ առթիվ իրենց հեղինակավոր կարծիքն են հայտնել Հովհաննես Թումանյանն ու Հովհաննես Հովհաննիսյանը: Հանրահայտ է Թումանյանի՝ 1896 թ. արտահայտած հետևյալ միտքը. «Շեքսպիրը դարձել է մի չափ՝ ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տղետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է: Այս տեսակետից մենք կարող ենք ասել, թե առաջադիմություն ենք արել, որ, սակայն, ինձ թվում է մի թո՛հիչք, մի հանկարծակի թո՛հիչք»¹⁰: Իսկ ըստ Հովհաննիսյանի՝ «հենց մի քանի էջ կարդալուց հետո մարդ խոստովանում է, որ թարգմանիչը քաջ գիտե յուր մայրենի լեզուն և վստահությամբ օգտվում է յուր գիտությունից ... Այնուհետև Մասեհյան խանի թարգմանությունն այն ամենամեծ արժանավորությունն ունի, որ նա կատարված է անգլերեն բնագրից ... մանավանդ որ Մասեհյան խանը հմուտ է անգլերենին, որ ապացուցանվում է թարգմանության զարմանալի նմանությամբ բնագրին»¹¹:

Գործի արժանիքները բարձր գնահատելով հանդերձ՝ երկու բանաստեղծները նշել են նաև թերություններ: Թումանյանը շեշտել է գրքում պատշաճ առաջաբանի ու բավարար ծանոթագրությունների բացակայությունը և նկատել անհաջող թարգմանված հատվածներ ու էական վրիպակներ¹²: Իսկ Հովհաննիսյանին հատկապես անկատար է թվացել թարգմանության տաղաչափությունը (տե՛ս ստորև): Այս հարցը, ինչպես կարդում ենք գրքի առաջաբանում, շատ է հուզել նաև իրեն՝ Մասեհյանին: Մինչ այդ Շեքսպիրի հայերեն թարգմանության ամենահաջող օրինակը, կանոնավոր չափածոյի տեսանկյունից, 1879 թ. տվել էր Գևորգ Բարխուդարյանը

պատրաստած էինք... Այս ժամանակամիջոցին Համլետի երրորդ թարգմանություն մ'ևս ի լույս եկավ Թիֆլիսի մեջ աշխատասիրությամբ Պրն. Հովհ. Մասեհյանի: Սույն թարգմանությունն, որո վրա քննադատությունը եղան ազգային թերթերու մեջ, եթե ներկայեր այն հանգամանքները, զոր այսպիսի կարևոր գործի մը թարգմանությունը կպահանջե, չափտի հրատարակելիք մեր այս աշխատությունը»: Այսինքն՝ Բաբազյանն իր թարգմանած «Համլետ»-ը լույս է ընծայել, որովհետև Մասեհյանի թարգմանությունը (1894), ինչպես որ Արծրունունը, գոհացուցիչ չի համարել:

⁹ Տե՛ս Վլ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Մի նոր տվյալ. – Շեքսպիրական, հ. 2, էջ 328:

¹⁰ Թումանյանը քննադատ, էջ 37:

¹¹ Հ ո վ հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1966, էջ 211:

¹² Թումանյանը քննադատ, էջ 39–60: Թումանյանն անգլերենին չէր տիրապետում, համեմատության համար նա օգտագործել էր ռուսերեն թարգմանություններ:

նր: Ահա մի երկտող նրա թարգմանած «Վենետիկի վաճառականը» պիեսից.

Այսպես ուրեմն / արտաքին տեսքը
Զէ միշտ մի բանի / իսկական պատկեր ...¹³

Մա հայ բանաստեղծների ամենից հաճախ կիրառած չափերից մեկն է. 10 վանկանի տող՝ մեջտեղում հատածով բաժանված երկու 5 վանկանի անդամի: Չեղեցիկ, որոշ հանդիսավոր երանգով ու ախորժալուր ռիթմ է, բայց ուրախ չեմ փորձել են այն օգտագործել Շեքսպիրի (և առհասարակ անգլիական հնգոտնյա յամբական ոտանավորի) թարգմանության համար, շատ անգամ ստիպված են եղել մեկ տողը թարգմանել հայերեն երկու տողով: Մասեհյանն իր առաջաբանում նախ մերժում է այս չափը. «Մեր տասնավանկը, բաժանված երկու հնգավանկ հատվածի, երկու մեծ անհարմարություն ունի. նախ, որ այդ շատ նեղ է անգլիականի մեկ տողը պարունակելու համար, և երբ անգլիականի ամեն մեկ տողը ունի տասնից մինչև տասներեք վանկ, անկարելի կլիներ նույն միտքը ամփոփել տասը վանկի մեջ, մինչդեռ հայերեն բառերը միշտ շատ ավելի երկար են, քան անգլերեն բառերը, և գրեթե միշտ պետք կլիներ մեկ բնագրի տողը փոխադրել երեք հնգավանկ հատվածներով, և այդ շատ երկար և ճապաղ կդառնար. երկրորդ և գլխավոր պակասությունն այն է, որ այդ կանոնավոր հնգավանկ չափի շարունակ կրկնվող անփոփոխ հնչունը ի վերջո ձանձրալի պիտի լիներ, մանավանդ մի թատերգության մեջ, երբ ունկնդրի ականջը երեք-չորս ժամ պետք է լսեր միննույն չափի միօրինակ կրկնումը»¹⁴:

Ինչպես կտեսնենք, տարիներ անց Մասեհյանը հրաժարվելու է իր այս խիստ գնահատականից ու միանգամայն ընդունելի համարելու հենց «երկար ու ճապաղ» և «ձանձրալի»՝ երեք հնգավանկ անդամից բաղկացած տողերը: Այստեղ պետք է նաև նշել, որ, հարկավ, հայերեն բառերը հաճախ երկար են անգլերեն բառերից, բայց միշտ չէ այդպես, և այդ երկարությունը պարտադիր «շատ ավելի» չէ:

Մասեհյանն այնուհետև մերժում է նաև ուրիշ բանաստեղծական չափեր ու կանգ առնում 11 վանկանի անկանոն ռիթմով չափատողների վրա, քանի որ դրանց «պեսպիսությունը արդեն ջնջում է ականջի զարկող միօրինակությունը. այդ նպատակին ավելի լավ հասնելու համար՝ մենք անխտիր գործ ածեցինք ինչպես վեց և հինգ, նույնպես հինգ և վեց, և երբեմն իսկ հինգ և հինգ, և վեց և վեց վանկեր»: Այժմ տեսնենք, թե ինչ է ստացվել այդ պեսպիսության արդյունքում¹⁵.

Աստված ներե քեզ: / Ես քեզ հետևում եմ: 11 (5+6)
Մեռնում եմ, Հորացիո: / Ով թշվառ թագուհի, 12 (6+6)

¹³ Տե՛ս ն. Մ ու Ր ա դ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 160:

¹⁴ Շեքսպիր. Համլետ, Դանեմարքի իշխան, անգլիերենից թարգմանեց Հովհաննես Խան Մասեհյան, Թիֆլիս, 1894, էջ 3–6:

¹⁵ Հմմտ. ն. Մ ու Ր ա դ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 176–177:

Մնա՛ս քարով:	4
Ո՛վ դուք, որ նայում եք / այդպես գունաթափ,	11 (6+5)
Եվ դողում այս դեպքից, / որ պապանձվել եք,	11 (6+5)
Լուռ հանդիսատես / այս եղելության.	10 (5+5)
Ա՛խ թե ունենայի / ժամանակ պատմելու	12 (6+6)
(Բայց այս անողորմ / ժանտ ոստիկանը,	10 (5+5)
Մահը, իր վճռի մեջ / միջոց չէ տալիս),	11 (6+5)
Օ, ես կարող էի / ձեզ պատմել... բայց մնա:	12 (6+6)
Հորացիո, մեռնում եմ, / և դու ապրում ես.	11 (6+5)
Պատմի՛ր դու իմ անցքը / և արդար դատս	11 (6+5)
Անտեղյակներին ¹⁶ :	5

Այսինքն՝ չի գործում որոշակի տաղաչափական օրենք, և ստեպ-ստեպ խախտվում է բանաստեղծական հստակ ռիթմիկ ընթացքը, որ այնքան անհրաժեշտ է շեքսպիրյան պոեզիայի ողջ հմայքը, ուժն ու գեղեցկությունն արտահայտելու համար: Այս մոտեցմանն իրավամբ առարկել է Հովհ. Հովհաննիսյանը՝ Մասեհյանի թարգմանության առիթով գրելով իր երկրորդ հոդվածը (վերնագրված՝ «Մի քանի խոսք մեր աշխարհաբարի տաղաչափության մասին»): «Այսքան ազատ դասավորությունը, – ասում է նա, – մեր համեստ կարծիքով արդեն կամայականության է մոտենում ... մարդ հաշիվը կորցնում է և տեսնում է, որ պ. Մասեհյանն իրոք բավական է համարում տողերի մեջ միայն վանկերի ընդհանուր թիվը (11) պահել, այդ էլ տեղ-տեղ 10 կամ 12 է դառնում»¹⁷:

Մասեհյանը հաշվի է առել այս քննադատությունը. 1890-ական թվականներին հրատարակված նրա հաջորդ թարգմանությունների («Ինչպես կուզեք» [1895], «Ռոմեո և Ջուլիետ» [1896], «Վենետիկի վաճառականը» [1897] և «Արքա Լիր» [1898]) բանաստեղծական հատվածները հիմնականում կանոնավոր 10 վանկանի (5+5) չափատողերով են: Իհարկե, անգլերեն շատ տողեր թարգմանված են հայերեն երկու տողով: Իսկ ինչպես վկայում է «Համլետ»-ի թարգմանության առաջին տարբերակից ավելի քան քառորդ դար անց (1921) Վիեննայում հրատարակված երկրորդ տարբերակը, Մասեհյանն անուշադրության չի մատնել նաև Թումանյանի դիտողությունները: Հիմնովին բարեփոխված այս հրատարակությունն արդեն ունի, բացի թարգմանության սկզբունքներին նվիրված կարճ նախաբանից, նաև ուսումնասիրություն («Համլետի» աղբյուրները» և «Համլետի» առեղծվածը» գլուխներով) ու ավելի ընդարձակ ծանոթագրություններ¹⁸: Անհաջող թարգմանված որոշ հատվածների վերաբերյալ Թումանյանի քննադատությունը նույնպես նկատի է առնված: Օրինակ՝ երբ Համլետը Գերտրուդին հարցնում է, թե նա ինչ կարծիքի է «Գոնզագոյի սպա-

¹⁶ Շեքսպիր. Համլետ, Դանեմարքի իշխան, էջ 218:

¹⁷ Հովհ. Հովհաննիսյան. Երկերի ժողովածու, հ. 3, էջ 226, հմմտ. Ն. Մուրադյան. նշվ. հոդվ., էջ 179–181:

¹⁸ Շեքսպիր. Համլետ, իշխան Դանեմարքայի, թարգմանեց Հովհաննես Մասեհյան, պատկերները՝ Ջապել Պոյաճյանի, Վիեննա, 1921, XI–XXXI և 145–161:

նության» մասին, մայրը պատասխանում է. «Կարծում եմ՝ տիկինը շատ է երդվում» (III. 2. 224): Առաջին տարբերակում Մասեհյանը սա թարգմանել էր՝ «Իմ կարծիքով, տիկինը չափազանց է բողոքում»¹⁹: Այս առթիվ Թումանյանը տարակուսանք էր հայտնել²⁰, քանզի Բեմի Թագուհին ոչ թե բողոքում է, այլ սիրո ճոռոմ խոստումներ տալիս իր ամուսնուն: Բանն այն է, որ թարգմանիչը protest բայը հասկացել էր այսօրվա սովորական՝ «բողոքել» իմաստով, մինչդեռ տվյալ դեպքում Շեքսպիրն այն օգտագործել է «հանդիսավոր խոստում տալ», «երդվել» նշանակությամբ: Վիեննայի հրատարակության մեջ այդ սխալն ուղղված է: Թարգմանությունն առհասարակ խմբագրված է անճանաչելիորեն: Որպեսզի դա պարզ երևա, մեջբերենք վերևում քաղված հատվածի նոր տարբերակը.

Թող երկինքը քեզ անպարտ արձակե. գալիս եմ ես էլ.
Մեռա, Հորացիո: Թշվառ թագուհի, օ՛հ, մնա՛ս բարով:
Դուք որ գունատվել և դողդողում եք այս պատահարից,
Դուք որ պապանձված հանդիսատես եք այս արարվածին...
Եթե ժամանակ ունենայի դեռ...
Բայց մահը, դաժան այն ոստիկանը, խիստ անողորմ է
Երբ կալանում է. – օ՛հ, կարող էի ձեզ բաներ պատմել...
Բայց ոչ, թող կենայ. Հորացիո, մեռա, բայց դու ապրում ես.
Պատմիր իմ դատը և գլխիս անցքը անտեղյակներին:

Ինչպես տեսնում ենք, Մասեհյանն այս անգամ հետևել է որոշակի տաղաչափական սկզբունքի՝ կիրառելով երկու հատածով 15 վանկանի (5+5+5) կամ մեկ հատածով 10 վանկանի (5+5) չափատողեր: Այսինքն՝ երեք հնգավանկ անդամից բաղկացած տողերը, որոնք նա բացառում էր 1894 թ. հրատարակության առաջաբանում, նրան այլևս երկար, ճապաղ ու ձանձրալի չեն թվացել: Այս մասին 1921 թ. նախաբանում կարդում ենք. «Նույնպես հարկ ենք համարել որոշ փոփոխություններ մտցնել տողերի դասավորության մեջ: Մեր նախկին թարգմանության մեջ գործածել ենք 10–12 վանկանոց տողեր, հետևելով անգլիական տողին, որ 10–11 վանկ ունի. բայց հայերեն բառերը ընդհանրապես ավելի երկար լինելով, քան անգլիական բառերը՝ ստիպված էինք մեկ տողի պարունակությունը տեղավորել մեկ ու կես տողի կամ երկու տողի մեջ, նախադասությունը տողերի վրա բաժանելով: Այդ բանը որոշ անհարմարություն ունի կարդալու համար, այսպես ասենք, աչքի տեսակետից: Մենք այժմ աշխատել ենք բնագրի ամեն մի տողը հայերեն մեկ տողով տալ, այսինքն՝ երկու կամ երեք հատված տեղավորել մեկ տողի մեջ. հետևանքն այն է եղել, որ ներկա ձևի մեջ կան երկար (15 վանկանոց) և կարճ (10 վանկանոց) տողեր, ինչ որ մեծ անհարմարություն չէ, քանի որ բնագրի մեջ էլ կան երկար ու կարճ տողեր»²¹:

¹⁹ Շեքսպիր. Համլետ, Դանեմարքի իշխան, էջ 115:

²⁰ Թումանյանը քննադատ, էջ 54:

²¹ Շեքսպիր. Համլետ, իշխան Դանեմարքայի, էջ VI:

Մասեհյանին, այնուամենայնիվ, ոչ միշտ է հաջողվել բնագրի յուրաքանչյուր տող հայերեն մեկ տողով վերարտադրել: Օրինակ՝ «Լինե՛լ, թե չլինե՛լ» մենախոսության 33 տողը նա թարգմանել է 40 տողով: Իսկ անգլերենում երկար ու կարճ ամբողջական տողերի միջև տարբերությունը, իհարկե, սովորաբար հինգ վանկի չի հասնում, այլ մեկ կամ, ավելի քիչ դեպքերում, երկու վանկ է: Մասեհյանական «Համլետ»-ի 1921 թ. տարբերակով սկիզբ է դրվել հայերեն Շեքսպիր թարգմանելու տաղաչափական մի ավանդույթի (10 և 15 վանկանի տողերի անկանոն հերթագայություն), որին հետևել են նաև նրա պիեսների հետագա հայ թարգմանիչները (Խաչիկ Դաշտենց, Ստեփան Ալաջաջյան, Հենրիկ Սևան)²²: Այն բնորոշվել է որպես Մասեհյանի տաղաչափական գյուտ²³: Մենք նույնպես, սրանից մոտ երեք տասնամյակ առաջ, Շեքսպիրի ժամանակակից Քրիստոֆեր Մարլոյի «Ֆաուստը»²⁴ թարգմանել ենք 5 վանկանի անդամներով, այն տարբերությամբ, որ հայերեն մեկ 10 վանկանի տողի բավարար չլինելու դեպքերում նախընտրել ենք ոչ թե մեկ երկար (15 վանկանի), այլ երկու 10 վանկանի տողեր: Իսկ հիմա, Մասեհյանի գյուտը բարձր գնահատելով հանդերձ, «Համլետ»-ի մեր թարգմանության մեջ կիրառել ենք այլ չափ (տե՛ս ստորև): Մեր նպատակը եղել է ոչ թե մրցակցությունը կամ երկարամյա ավանդույթը մերժելը (քա՛յ լիցի), այլ Շեքսպիր թարգմանելու համար հայերենի տաղաչափական նաև ուրիշ հնարավորություններ օգտագործելը:

1921 թ. Վիեննայում տպված «Համլետ»-ը հանրահայտ է, և այստեղ դրա թարգմանական այլ առանձնահատկությունների վերլուծության անհրաժեշտություն չկա: Այն, ինչպես նաև Շեքսպիրի ուրիշ պիեսների Մասեհյանի ու նրա գործի արժանավոր շարունակողների (Խ. Դաշտենց և ուրիշներ) թարգմանությունները վաղուց դարձել են հայ մշակույթի անբաժան մաս՝ պարբերաբար վերահրատարակվելով²⁵ ու բեմադրվելով: Դրանք սիրելի են նաև մեզ, և դրանց շնորհիվ է, որ, ուսանողական տարիներից ի վեր, սկսել ենք ծանոթանալ Շեքսպիրի երկերին:

²² Շեքսպիրի սոնետների և պոեմների թարգմանիչ Ս. Մկրտչյանն օգտագործել է 15 վանկանի չափատողներ (5+5+5 և 4+4+4+3). Շեքսպիր. Սոնետներ, պոեմներ, բանաստեղծություններ, անգլերենից թարգմանեց Ս. Մկրտչյանը, Երևան, 2013 (առաջին հրատ.՝ 1991):

²³ Ն. Մ ու ը ղ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 159–204:

²⁴ Քր. Մ ա ը լ ո. Դոկտոր Ֆաուստի ողբերգական պատմությունը, անգլերենից թարգմանեց Արամ Թովմյանը, Երևան, 1985:

²⁵ Օրինակ՝ հիշարժան են 1951–1955 թթ. լույս տեսած եռահատորյակը (Վ. Շեքսպիր. Ընտիր երկեր երեք հատորով, կազմեց Ն. Մուրադյանը, թարգմանությունը Հովհ. Մասեհյանի, Խ. Դաշտենցի և Ստ. Ալաջաջյանի, խմբագրությամբ և առաջաբանով Հովհ. Մամիկոնյանի, Երևան, 1951–1955) ու 1964 թ. Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ լույս տեսած երկհատորյակը՝ «Համլետ»-ով հանդերձ (Վ. Շեքսպիր. Ընտիր երկեր երկու հատորով, թարգմանությունը Հովհ. Մասեհյանի, Խ. Դաշտենցի և Ստ. Ալաջաջյանի, վերջաբանը Հովհ. Մամիկոնյանի, Երևան, 1964), ինչպես նաև քրոնիկների երկու հատորը. Շեքսպիր. Քրոնիկներ, թարգմանությունը՝ Խ. Դաշտենցի և Հ. Սևանի, թարգմանության խմբագիրներ՝ Ա. Թադևոսյան և Ա. Հովսեփյան, ընդհանուր խմբագրությամբ՝ Ռ. Զարյանի, հոդվածներ և ծանոթագրություններ՝ Յու. Շվեդով, Ռ. Զարյան և Ն. Մուրադյան, 2 հ., Երևան, 1972–1973: «Համլետ»-ի Մասեհյանի թարգմանությունը վերջերս լույս է տեսել Զ. Բոյաջյանի խմբագրությամբ (Շեքսպիր. Համլետ, Հովհ. Մասեհյանի թարգմանությամբ, Զ. Բոյաջյանի խմբագրությամբ և նոր ծանոթագրություններով, Երևան, 2012):

Այժմ՝ մի քանի խոսք թարգմանական այն սկզբունքների մասին, որոնք կիրառել ենք «Համլետ»-ի մեր թարգմանության ընթացքում: Թեպետ Շեքսպիրի լեզուն միջին անգլերեն չէ և պատկանում է արդեն վաղ նոր անգլերենի (Early Modern English) զարգացած փուլին, հիմա այն հաճախ անհասկանալի է նույնիսկ լեզվի կրողներին: Ժամանակակից անգլերենով անհնար է Շեքսպիր կարդալ, քանի որ, բացի քերականական խնդիրներից, դժվարություններ է առաջացնում նաև նրա ինքնատիպ բառապաշարը: Բազմաթիվ բառեր, որոնք մեզ այսօր կարող են առաջին հայացքից ծանոթ թվալ, նա օգտագործել է բոլորովին ուրիշ իմաստներով: Այս առումով խիստ պատասխանատու է թարգմանչի գործը, որովհետև մեծ է սայթաքելու վտանգը: Երկի թարգմանության ընթացքում մեզ մեծապես օգնել են մի շարք շեքսպիրյան բառարաններ²⁶ ու քերականական ձեռնարկներ²⁷, ինչպես նաև «Համլետ»-ի՝ վերջին տասնամյակների լավագույն, մանրամասնորեն ծանոթագրված անգլերեն հրատարակություններ²⁸:

Աշխատել ենք չափատողի դիմաց չափատող սկզբունքով, այնպես որ հայերեն չափատողների քանակը ճշգրտորեն համապատասխանում է բնագրին: Բայց քանի որ անգլերեն տարբեր հրատարակություններում էլ, կախված տողատումից ու աշխատասիրողի պատրաստած տեքստից, տողահամարները միշտ չեն համընկնում, անհրաժեշտ էր ընտրել ընդունված համարակալումներից մեկը: Հայ ընթերցողին հարկավոր է ներկայացնել համահավաք «Համլետ», այնպես որ նա մեկ բնագրով աչքի առաջ ունենա երկու լավագույն տպագիր նախօրինակները՝ այսպես կոչված Quarto (քառածալ) 2 (1604/5) և Folio (երկծալ) (1623) տարբերակները, սակայն միաժամանակ կարողանա հստակ զանազանել դրանցից միայն մեկում առկա հատվածները: Այս նպատակով համապատասխան տողերի երկու կողմից դրել ենք^{Q2} և^F պայմանական նշանները: Տողերի մեր համարակալումը համապատասխանում է The Arden Shakespeare երկրորդ շարքի հրատարակությանը:

²⁶ A. I. Schmidt. Shakespeare-Lexicon: A Complete Dictionary of All the English Words, Phrases and Constructions in the Works of the Poet, third edition revised and enlarged by Gregor Sarrazin, 2 vols., Berlin, 1902 (first published 1874–1875); Charles T. Onions, A Shakespeare Glossary, second edition with corrections and enlarged addenda, Oxford, 1958 (first edition 1911); Charles T. Onions, A Shakespeare Glossary, enlarged and revised throughout by Robert D. Eagleson, Oxford, 1986; David Crystal & Ben Crystal, Shakespeare's Words: A Glossary & Language Companion, with a preface by Stanley Wells, Penguin Books, 2002.

²⁷ Edwin A. Abbott. A Shakespearian Grammar: An Attempt to Illustrate Some of the Differences between Elizabethan and Modern English, revised and enlarged edition, London, 1870 (first published 1869); Norman F. Blake, A Grammar of Shakespeare's Language, Basingstoke, 2002; Jonathan Hope, Shakespeare's Grammar, The Arden Shakespeare, London, 2003.

²⁸ Hamlet by William Shakespeare, ed. T. J. B. Spencer, with an introduction by Anne Barton, The New Penguin Shakespeare, Penguin Books, reprinted with revised Further Reading, London, New York, 1996 (first published 1980); Hamlet, ed. Harold Jenkins, The Arden Shakespeare (Second Series), 2001 (first published 1982); Hamlet, Prince of Denmark, ed. Philip Edwards, The New Cambridge Shakespeare, Cambridge, 2009 (first published 1985, updated edition 2003); Hamlet, ed. George Richard Hibbard, The Oxford Shakespeare, Oxford, 2008 (first published 1987); Hamlet, ed. Ann Thompson and Neil Taylor, The Arden Shakespeare (Third Series), 2006 և ուրիշներ:

բակությունն²⁹ այն նկատառումով, որ Հարոլդ Ջենքինզի պատրաստած բնագիրը հանրաձայն է ու համահավաք: Մակայն թարգմանությունը, չնայած դրան, լիովին չի համընկնում այդ բնագրին, քանզի որոշ դեպքերում չենք հետևել Ջենքինզի նախընտրած տարբերություններին:

Չափածոն թարգմանել ենք 12 վանկանի տողերով (խոսքն ամբողջական չափատողերի մասին է)՝ երկու հատածով իրարից բաժանված երեք քառավանկ անդամ. 4 + 4 + 4: Օրինակ՝

Այսպես, քնած, / եղբոր ձեռքով / միանգամից
Ես զրկվեցի / կյանքից, թագից / ու թագուհուց:

Այս չափն օգտագործել ենք հետևյալ պատճառաբանությամբ: Շեքսպիրյան տաղաչափության հիմքում հնգոտնյա յամբն է (iambic pentameter)³⁰, այսինքն՝ 10 վանկանի չափատողը՝ բաղկացած հինգ յամբից (երկվանկ ոտք, որի երկրորդ վանկն է շեշտված. – /): Ուրեմն այդ չափատողում շեշտված են երկրորդ, չորրորդ, վեցերորդ, ութերորդ և տասներորդ վանկերը. – / – / – / – / – /: Օրինակ՝ Հորացիոն ասում է (I. 2. 215–217).

– / – / – / – / – / – /
But an- swer made it none. || Yet once me- thought
It lif- ted up it head and did ad- dress
It- self to mo- tion like as it would speak.

Շեշտը, սակայն, շարժական է. որևէ ոտքում կարող է շեշտված լինել ոչ թե երկրորդ, այլ առաջին վանկը՝ / – (սա կոչվում է քորեյ կամ տրոքեյ): Ասենք (II. 2. 566)՝

/ – – / – / – / – / – /
Who calls me vil- lain, breaks my pate a- cross

Իսկ շատ դեպքերում տողավերջի յամբին ավելանում է մի անշեշտ վանկ, և չափատողը դառնում է 11 վանկանի ու ձեռք բերում « իգական վերջավորու- թյուն» (feminine ending): Օրինակ (III. 1. 56)՝

– / – / – / / – – / –
To be or not to be, || that is the ques- tion

Երբ կողք կողքի են հայտնվում երկու շեշտված վանկ, ինչպես այս դեպքում է, դրանց միջև հատած (caesura) է լինում, որն անզլերեն և ընդ-

²⁹ Hamlet, ed. Harold Jenkins, որից թեև մեր համարակալումն ու տողատումը երբեմն աննշան, հարկադրական շեղումներ ունեն (հատկապես արձակ հատվածներում և այն դեպքերում, երբ թարգմանության մեջ ներառել ենք հատվածներ, որոնք Ջենքինզը զանց է առել՝ համարելով ոչ հեղինակային), սակայն յուրաքանչյուր տեսարանում տողերի ընդհանուր քանակն ըստ կարելիության պահպանված է:

³⁰ Շեքսպիրյան տաղաչափության մասին տե՛ս T. G e o r g e. Wright, Shakespeare's Metrical Art, Berkeley, Los Angeles, London, 1988.

հանրապես վանկա-շեշտական 10–11 վանկանի ոտանավորում կարող է տարբեր դիրքեր ունենալ կամ առհասարակ բացակայել (լատինատառ տաղաչափության մեջ հաստածի ընդունված նշանն է՝ Ս): Շեքսպիրյան չափածոյում, այսպիսով, հնարավոր է շեշտված ու անշեշտ վանկերի տարբեր հերթագայություն, և թեպետ այդ տողերն առավելապես 10 վանկանի են, սովորական է նաև 11 վանկանի կառուցվածքը: Իսկ երբեմն հանդիպում են նաև 10 վանկից պակաս (օրինակ՝ Must give us pause – there’s the respect [III. 1. 68]) կամ 11 վանկից ավելի (օրինակ՝ A serpent stung me – so the whole ear of Denmark [I. 5. 36]) երկարությամբ տողեր: Եվ այդուհանդերձ, շեքսպիրյան ոտանավորի գերիշխող միավորը երկվանկ ոտքն է, հիմնականում յամբը: Քանի որ հայերեն բառերը հաճախ ավելի երկար են անգլերեն բառերից, և մեր լեզվում շեշտը վերջնական է (ի տարբերություն անգլերենի շարժական շեշտի), անհնար է որևէ ծավալուն երկ հայերեն թարգմանել միայն յամբերով կամ յամբ-քորեյներով: Բայց քառավանկ անդամը (երկու յամբ, քորեյ ու յամբ, երկու քորեյ, մեկ քառավանկ ոտք՝ պեոն, շեշտի տարբեր դիրքերով և այլն) հավասար է զույգ երկվանկ ոտքի, ուստի այն բավական հարազատորեն փոխանցում է շեքսպիրյան բանաստեղծության ռիթմը, իսկ 4+4+4 կառուցվածք ունեցող հայկական չափատողի՝ անգլիականի համեմատ մեկ կամ երկու լրացուցիչ վանկը հնարավորություն է տալիս, սովորաբար առանց կորուստների կամ, երբեմն, աննշան կորուստներով (այսինքն՝ հատուկենտ անկարևոր բառերի բացթողմամբ), անգլերեն մեկ տողը թարգմանել հայերեն մեկ տողով:

Անգլերենի տաղաչափության մեջ վճռորոշ է շեշտի դիրքը, թեպետ նշանակություն ունի նաև վանկերի քանակը, իսկ հայերենում ռիթմն ստեղծվում է առաջին հերթին վանկերի հավասար թվով (վանկական ոտանավոր): Եթե հաշվի առնենք երկու լեզուների տաղաչափական այդ առանձնահատկությունները, առավել ևս պարզ կդառնա, որ անգլերենին լիովին համապատասխան հայկական չափ չի կարող լինել: Ուստի Շեքսպիր հնարավոր է հայերեն թարգմանել բանաստեղծական տարբեր չափերով: Մեր ընտրած 4+4+4 կառուցվածքը, որով ժամանակին թարգմանել ենք հին հունական դրամատուրգիա³¹, թեպետ մասեհյանական 15 վանկանի տողերի համեմատ պակաս մոնումենտալ հնչողություն ունի, բայց, ավելի թեթև ու սրընթաց լինելով, միանգամայն համապատասխանում է շեքսպիրյան դրամատիկ իրավիճակներին և երկխոսություններին: 15 վանկանի տողերը որոշ դեպքերում չափից ավելի երկար են լինում անգլերեն 10 վանկի համեմատ, և թարգմանիչը ռիթմ ապահովելու համար ստիպված իր կողմից ավելացնում է բառեր, որոնք անգլերեն բնագրում չկան: Օրինակ՝ մեռնող Համլետը, ըստ Մասեհյանի թարգմանության, ասում է (հմմտ. V. 2. 360–361).

Բայց գուշակում եմ, որ ընտրությունը վիճակվելու է
Քաջ Ֆորտինբրասին. նրան եմ տալիս մահամերձ ձայնս:

³¹ Օրինակ՝ Է ս ք ի լ ո ս. Ողբերգություններ, հին հունարենից թարգմանեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց Ա. Թովյանը, Երևան, 1991 կամ՝ Է վ ը ի պ ի դ է ս. Բացրուստիներ, հին հունարենից թարգմանեց Ա. Թովյանը, առաջաբանը՝ Հ. Հովհաննիսյանի, Երևան, 1995:

«Քաջ» մակդիրը բնագրից բացակայում է, և հայտնի չէ՝ Համլետը, իր մահամերձ ձայնը Ֆորտինբրասին տալով հանդերձ (որովհետև ուրիշ թեկնածու չկա), նրան իրոք քաջ համարո՞ւմ է, թե ոչ: Ավելի շուտ՝ ո՛չ, քանի որ «Բնչպե՛ս են ինձ բոլոր դեպքերն ամբաստանում» մենախոսության մեջ (IV. 4. 32–66) նա հեզնում է «հանուն ձվի մի կճեպի» ցուցաբերվող այդ «քաջությունը»:

Շեքսպիր թարգմանելու համար պիտանի հայերեն ամեն մի բանաստեղծական չափ կարող է ունենալ իր առավելություններն ու թերությունները: «Մնացյալը լռություն է» (V. 2. 363) հանրահայտ նախադասությունը, օրինակ, անհնար է գետեղել 5 վանկանի անդամների մեջ, և 4+4 կառույցը տվյալ դեպքում իդեալական է: Մյուս կողմից քառավանկ չափը չի տեղավորում 5 վանկանի բառեր (օրինակ՝ «դավաճանություն» V. 2. 328): Եվ երբ, երբեմն, դրանց կիրառությունն անհրաժեշտ է, թարգմանիչը հարկադրաբար կա՛մ տաղաչափական փոքրիկ մեղանչում է անում, կա՛մ էլ ընտրում բնագրին պակաս հարազատ բառ: Իսկ, ասենք, «Լինե՛լ, թե չլինել» արտահայտությունն անհամապատասխան է թե՛ քառավանկ, թե՛ հնգավանկ անդամներին:

Այս ամենը հաշվի ենք առել 12 վանկանի չափն ընտրելիս, և դրա նպատակահարմարությունը հաստատվել է աշխատանքի ընթացքում: Ավելացնենք մի ուշագրավ տվյալ: Երբ արդեն այս չափն ընտրել էինք ու սկսել աշխատել, տեղեկացանք, որ 1880-ական թվականներից ի վեր մոտավորապես նույնպիսի տողերով Շեքսպիր է թարգմանել ականավոր նկարիչ Վարդգես Սուրենյանցը³²: Տարբերությունն այն է, որ նա կիրառել է 11 վանկանի տողեր՝ 4+4+3 կառուցվածքով (այսինքն՝ վերջին անդամի երկարությունը մի վանկով պակաս է): 1912 թ., իբրև «Հուշարար» հանդեսի հավելված, տպվել է այդ չափով նրա թարգմանած «Միջամատային գիշերվա երագ» կատակերգությունը: Վերջին քառավանկի փոխարեն եռավանկը, սակայն, հազիվ թե արդարացված է, քանզի այն մեզ զրկում է մեկ լրացուցիչ թանկագին վանկից, որ խիստ անհրաժեշտ է անգլերեն տողը հայերեն մեկ տողում տեղավորելու համար:

Վերջապես պետք է նշել, որ մի հոդվածում Շեքսպիրի սոնետներից թարգմանություններ է արել Պարույր Սևակը՝ կիրառելով 5+5+5, 4+4+4+4, ինչպես նաև մեր նախընտրած 4+4+4 չափը³³: Չի բացառվում, որ Շեքսպիր թարգմանելիս ուրիշներն էլ այն օգտագործած լինեն:

Փորձենք ցույց տալ, որ երեք քառավանկ անդամներից բաղկացած հայերեն չափատողը, ինչպես 5+5 / 5+5+5 կառույցը, միանգամայն կիրառելի է Շեքսպիր թարգմանելու համար՝ մեջբերելով մի անգլերեն հաստիված «Համլետ»-ից (I. 2. 196–212) և իրար տակ դնելով Մասեհյանի ու մեր թարգմանությունները.

Two nights together had these gentlemen,
Marcellus and Bernardo, on their watch,

³² Հմմտ. Վ. Թեբրգիբաշյան. նշվ. աշխ., էջ 98–101 և Ն. Մուրադյան. նշվ. հոդվ., էջ 185–187:

³³ Պ. Սևակ. Շեքսպիր և Սայաթ-Նովա (Հովհ. Թումանյանի հետքերով).– Շեքսպիրական, հ. 2, էջ 120–129:

In the dead vast and middle of the night,
 Been thus encounter'd: a figure like your father,
 Armed at point exactly, cap-à-pie,
 Appears before them, and with solemn march
 Goes slow and stately by them. Thrice he walk'd
 By their oppress'd and fear-surprised eyes,
 Within his truncheon's length, whilst they, distill'd
 Almost to jelly with the act of fear,
 Stand dumb and speak not to him. This to me
 In dreadful secrecy impart they did,
 And I with them the third night kept the watch,
 Where, as they had deliver'd, both in time,
 Form of the thing, each word made true and good,
 The apparition comes. I knew your father;
 These hands are not more like.

Մասեհյանի թարգմանությունը.

Երկու գիշեր է / վրբայե վրբա, / այս պարոնները,
 Բեռնարդոն ինքը / և Մարցելլոսը, / հսկած ժամանակ,
 Գիշերվա կեսին / և մեռելային / ամայության մեջ
 Մի բան են տեսնում: / Մի ձև, ձեր հոր պես,
 Գլխից մինչև ոտք / սպառազինված, / երևում է նրանց
 Եվ հանդիսավոր / ու ծանրը քայլով / գալիս անցնում է
 Նրբանց առջևից. / և երեք անգամ / քայլում է այսպես
 Նրբանց ապշահար / և ահաբեկված / աչքերի առաջ
 Իր գավազանի / հեռավորությամբ:
 Իսկ սրբանք վախից / դոնդողի փոխված՝
 Պապանձված կանգնում / և ոչինչ ասել / չեն կարողանում:
 Այս բանն ահալից / գաղտնապահությամբ / հաղորդեցին ինձ.
 Երրորդ գիշերը / ես էլ նրբանց հետ / պահակ կանգնեցի,
 Եվ ճիշտ նույն ձևով, / որ պատմել էին, / միևնույն ժամին,
 Նույն կերպարանքով, / ամեն մի բառը / կետ առ կետ ճշգրիտ,
 Տեսիլքը եկավ. / ձեր հորը, տեր իմ, / ճանաչում էի,
 Երկու ձեռքս իրար / այնպես նրման չեն:

Մեր թարգմանությունը.

Երկու գիշեր, / երբ միասին / այս պարոնայք՝
 Մարցելլոսը / և Բեռնարդոն, / պահակ էին,
 Կեսգիշերվա / մեռելային / անապատում
 Հանդիպել են / ձեր հոր նման / մի կերպարի,
 Որ լիովին, / ոտքից գլուխ / զրահներով,
 Հայտնվել է / իրենց դիմաց / վեհ քայլածքով
 Ու հեռացել / դանդաղ, խրոխտ: / Երեք անգամ
 Նրանց ցնցված / ու զարհուրած / աչքի առջև
 Քայլել է նա՝ / իր մականի / չափով հեռու,

Մինչդեռ նրանք, / ահից կարծես / դոնդող դարձած,
 Կանգնել են լուռ, / նրա հետ չեն / փորձել խոսել:
 Ինձ հայտնեցին / սա երկյուղած / գաղտնիությամբ,
 Ես էլ երբորդ / գիշերն իրենց / հետ հսկեցի,
 Եվ, ինչպես որ / ասել էին, / հենց իր ժամին
 Ու նույն տեսքով, / ամեն մի բառ / հաստատելով,
 Ոգին եկավ: / Ես ձեր հորը / ծանոթ էի.
 Այս ձեռքերն են / նույնքան նման:

Ուզում ենք հողիվածն ավարտել երկու մեջբերմամբ: Մասեհյանը «Համլետ»-ի 1921 թ. նախաբանում գրում է. «Մենք ամեննին հավակնություն չունինք Շեքսպիրի թարգմանության դժվարին և պատասխանատու գործն արժանապես կատարած լինելու. բայց եթե այս աշխատությունը կարող կլինի իբրև հիմք ծառայել, որի վրա ավելի ընդունակ թարգմանիչներ ավելի հարագատորեն կկառուցանեն շեքսպիրյան մտածության հայացրած շենքը, մեր ամենաջերմ իղձը կատարված պիտի համարենք»³⁴:

Բնավ մեզ չհամարելով ավելի ընդունակ թարգմանիչ՝ «Շեքսպիրյան մտածության հայացրած շենքը» շարունակ կառուցելու գաղափարն ընդունում ենք անվերապահորեն: Այսօր նորից Շեքսպիր թարգմանել՝ նշանակում է հենց կատարել Մասեհյանի պատգամը: Մենք խիստ կարիք ունենք «Համլետ»-ի ու շեքսպիրյան այլ գլուխգործոցների ոչ թե մեկ կամ երկու, այլ շատ ավելի թարգմանությունների, և որքան դրանք բազմաթիվ լինեն, այնքան իրավունք կունենանք քաղաքակիրթ կոչվելու հույս փայփայելու: Մշակույթը կենդանի օրգանիզմ է, որին ժամանակ առ ժամանակ պետք են թարմացուցիչ ներարկումներ, իսկ Շեքսպիրն այն կենսատու նյութերից է, որոնցով մշակութային օրգանիզմը պարբերաբար առողջանում է ու զարգանում:

Վերստին հիշենք նաև Թումանյանի խոսքը. «Շեքսպիրը դարձել է մի չափ՝ ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է»³⁵: «Տգետ» ու «տհաս» չլինելը և «տկար լեզու» չունենալը հաստատվում է ոչ թե առանձին՝ թեկուզև երևելի թարգմանական օրինակներով, այլ հարատև աշխատանքով ու սերնդեսերունդ փոխանցվող ավանդույթով: Մենք դեռ անելիք շատ ունենք:

³⁴ Շեքսպիր. Համլետ, իշխան Դանեմարքայի, էջ VII:

³⁵ Թումանյանը քննադատ, էջ 37:

«ГАМЛЕТ» ШЕКСПИРА НА АРМЯНСКОМ
(Краткий исторический очерк и вопросы перевода)

ԱՐԱՄ ԹՕՓՇՅԱՆ

Ր Ե Զ Յ Ո Ւ Ե

Впервые отрывки из «Гамлета» были изданы в армянском переводе в 1862 г. Затем, в последней четверти XIX века, кроме известного перевода Ованнеса Масеяна, появилось еще несколько, полных или частичных, в основном прозаических армянских версий. Перевод Масеяна был издан в 1894 г. в Тифлисе, однако в дальнейшем он основательно переработал его, и новый вариант увидел свет в 1921 г. в Вене. Стихотворный размер последнего – нерегулярная последовательность десяти и пятнадцатисложных строк (5+5 / 5+5+5) – был и впоследствии использован другими армянскими переводчиками пьес Шекспира (иногда длину строки доводили до двадцати слогов: 5+5+5+5). Этот размер действительно является целесообразным в ряде аспектов и по праву характеризовался как изобретение Масеяна в области стихосложения. Тем не менее есть и другие стихотворные размеры, подходящие для передачи на армянском шекспировского пятистопного ямба, одним из которых, 4+4+4, автор этих строк перевел «Гамлета».

SHAKESPEARE'S "HAMLET" IN ARMENIAN
(A brief historical overview and translation issues)

ԱՐԱՄ ԹՕՓՇՅԱՆ

S u m m a r y

The first (incomplete) Armenian translation of "Hamlet" was published in 1862. Subsequently, in the last quarter of the 19th century, several others (not counting Hovhannes Masehyan's famous translation), complete or fragmentary and mainly in prose, were printed. Masehyan's translation appeared in 1894 in Tiflis but afterwards he improved it throughout, and the new version was published in 1921 in Vienna. The latter's poetic metre, namely 10 and 15 syllable (5+5 / 5+5+5) lines following one another irregularly, was later used by other Armenian translators of Shakespeare's plays as well (sometimes they extended the lines to 20 syllables: 5+5+5+5). This metre, indeed, is suitable from several aspects and has been deservedly characterized as Masehyan's metrical invention. However, there also exist other poetical metres applicable for converting the Shakespearean iambic pentameter into Armenian verse. One of those metres (4+4+4) has been used by the author of these lines for his translation of "Hamlet".